[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
25	Հոկտեմբեր	2019 թ.		Բ	0782569845
[4] Մատուցման ամսաթիվը					
25	Հոկտեմբեր	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	25 Հոկտեմբեր, 2019 թ.	Բ0782569845

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	0	0	6	8	1	3		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										

[10] Անվանումը	ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)	
[11] Բանկային տվյալները	Հայէկոնոմբանկ ԲԲԸ	N 163288639103
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ Դ.ԱՆՀԱՂԹ 19/1 70	
[13] Լրացուցիչ տվյալներ		

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								

[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ Աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[19] Լրացուցիչ տվյալներ		
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր — Համար	
	Լիազորագիր — Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ծառայության ծավալը կամ ծանրաբեռնվածությունը	Միավորի գինը	Հարկ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 17864417	րոպե	2905	83.33		242073.65
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 12137912	րոպե	2020	83.33		168326.6
3	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 10198117	րոպե	1300	83.33		108329
4	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-հնդկերեն-հայերեն քրեական գործ թիվ 10186217	րոպե	1475	216.67		319588.25
5	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-արաբերեն-հայերեն քր. գործ թիվ 10860217	րոպե	1455	123.33		179445.15
6	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերեն-արաբերեն-հայերեն քր. գործ թիվ 10860217	նիշ	4236	3.05		12919.8
7	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 44167618	ժամ	4	5000		20000
8	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-հնդկերեն-հայերեն քրեական գործ թիվ 14882618	րոպե	2180	216.67		472340.6
9	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 27177817	րոպե	2200	83.33		183326

Ընդամենը	1706349.05

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ KHACHATRYAN ARTUR 3208790082

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

25/10/2019 13:40:39

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՈՐՈՇՈՒՄ

Քրեական գործով թարգման ներգրավելու մասին

« 14 » օգոստոսի 2017թ. քաղաք Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ Դ.Դավիդյանս, վերանայելով թիվ 17864417 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

23.07.2017թ. ժամը 14:00-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում է տվել Արամ Բենյամինի Հարությունյանը այն մասին, որ Լևոն Խաչիկի ճարտարյանը 23.07.2017թ. ժամը 12:40-ի սահմաններում Երևան քաղաքի Նոր Նորքի 2-րդ զանգվածի <<Հայկի>> արձանի մոտակայքում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ, բռունցքով հարվածել և կոտրել է իրեն պատկանող <<BMW X3>> մակնիշի 11 FF 303 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետևի հողմապակին՝ պատճառելով 238.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

02.08.2017թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17864417 քրեական գործը:

04.08.2017թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնից ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին է ստացվել թիվ 17864417 քրեական գործը և ընդունվել վարույթ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Արամ Բենյամինի Հարությունյանին, ով չի տիրապետում ՀՀ դատավարական հայերեն գրավոր լեզվին, սակայն ազատորեն տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռնել թարգմանի օգնությամբ իրականացնելու օրենքով սահմանված իր իրավունքները:

Ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածով և 15 հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Թիվ 17864417 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ թարգմանիչ Գայանե Գևորգի Աղամալյանին, ով ազատորեն տիրապետում է ինչպես ռուսերեն, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության՝ հայերեն գրավոր և բանավոր խոսքին: «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ թարգմանչական լիազորություններ կատարելու համար տրված 14.08.2017թ. լիազորագիր):

2. Գայանե Գևորգի Աղամալյանին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները,

ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդ. նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ **Դ.Դավիդյան**

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քր. օր-ի 338 հոդ. նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգման՝ **Գ.Աղամալյան**

« 14.» 08. 2017.թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

26 սեպտեմբերի 2017թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Ռ.Ռ.Սեդրակյանս, քննարկելով վարույթիս թիվ 12137912 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2012 թվականի հունիսի 10-ից մինչև 2012 թվականի հուլիսի 04-ն ընկած ժամանակահատվածում Վրաստանի քաղաքացի, ազգությամբ հայ Էրիկ Դավիդովը Բաշինջաղյան 131/1 տանը, իր ծանոթ Ալինա Գառնիկի Միհիթարյանից գաղտնի, նրա կամքին հակառակ լուսանկարել է նրան, իսկ երբ իզվել են նրանց հարաբերությունները, Ալինա Միհիթարյանի անվամբ «Համադասարանցիներ» կայքում ստեղծել է անձնական էջ և այնտեղ տեղադրել անձնական գաղտնիք համարվող նրա կիսամերկ լուսանկարները և դրանք տարածել Ալինա Միհիթարյանի հարազատների և ընկերների շրջապատում:

Դեպքի առթիվ 2012 թվականի նոյեմբերի 29-ինԷրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության ընթացքում Ալինա Միհիթարյանը ճանաչվել է տուժող և հարցաքննվել:

2013 թվականի հոկտեմբերի 30-ին Էրիդ Դավիդովը ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածով ներգրավել է որպես մեղադրյալ: Նույն օրը վերջինիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում և խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

30.10.2013 թվականին քրեական գործով վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:

24.09.2017 թվականին մեղադրյալ-հետախուզվող Էրիկ Դավիդովը հայտնաբերվել է ոստիկանության Մաշտոցի բաժնի աշխատակիցների կողմից և ներկայացվել քննչական բաժին:

24.09.2017 թվականին քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով անհրաժեշտ է մասնակցել ռուսերեն լեզվին չտիրապետող մեղադրյալ Էրիկ Դավիդովի հարցաքննությանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. 12137912 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել « Արթ քոնսալթինգ » ՍՊ ընկերության թարգմանիչ Գայանե Գևորգի Աղամալյանին, անձ, ԱՆ 0534814, հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություններ գրավոր և բանավոր՝ հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն լեզուներով:

2. Գայանե Աղամալյանը նախազգուշացնել է ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, նրան միաժամանակ ծանոթացնել թարգմանի իրավունքների և պարտականությունների հետ:

Ավագ քննիչ,
արդարադատության ավագ լեյտենանտ՝ Ռ.Ռ. Սեդրակյան

Ծանոթացա որոշմանը՝ Գ. Աղամալյան

ՈՐՈՇՈՒՄ

քրեական գործով թարգման ներգրավելու մասին

01.12.2017թ **ք. Երևան**

ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Ռ. Սարգսյանս, քննարկելով թիվ 10198117 քրեական գործի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

2016 թվականի նոյեմբեր ամսվա վերջերից Արամ Ռուբենի Հայրբաբամյանը կնոջ՝ Վալենտինա Նիկոլի Հարեյանի հետ ժամանակավոր բնակվելով վերջինիս մոր՝ Նարինե Ռաֆիկի Գրիգորյանի՝ Երևան քաղաքի 16 թաղամասի 47 շենքի 7 բնակարանում, 2016 թվականի դեկտեմբերի 14-ից մինչ դեկտեմբերի 27-ն ընկած ժամանակահատվածում, նշված բնակարանի պատշգամբում դրված կարի մեքենայի պահարանի մեջից գաղտնի հափշտակել է Նարինե Ռաֆիկի Գրիգորյանին պատկանող խոշոր չափերի՝ 1.290.195 ՀՀ դրամին համարժեք 130.000 ՌԴ ռուբլի և 550 եվրո գումար:

Փաստի առթիվ 2017 թվականի հոկտեմբերի 12-ին՝ ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 10198117 քրեական գործը:

Նախաքննության կատարման նպատակով ոստիկանության Մաշտոցի բաժնից թիվ 10198117 քրեական գործն ուղարկվել է Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին և 2017 թվականի հոկտեմբերի 17-ին քննչական բաժնի պետի կողմից քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննելու սույն քրեական գործով վկա Վարդուհի Ռուբենի Հայրբաբամյանին, սակայն վերջինս հայտնել է, որ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, սակայն տիրապետում է հայերեն բանավոր, ռուսերեն թե գրավոր և թե բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել թարգմանի օգնությամբ իրականացնելու օրենքով սահմանված իրավունքները:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 10198117 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Արթ Քոնսալթինք» ՍՊԸ-ի թարգման Գայանե Գևորգի Աղամալյանին, ով լիազորված է ՀՀ քննչական կոմիտեում լիազորագրի շրջանակներում կատարել բանավոր և գրավոր թարգմանություններ ռուսաց լեզվից հայերեն և հակառակը:

2. Գայանե Գևորգի Աղամալյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ **Ռ. Գ. Սարգսյան**

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Գ. Գերասիմովա

« 01 » 12 2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թարգման ներգրավելու մասին

16-ը հոկտեմբերի 2017թ. Ք.Երևան

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Կ.Մարտիկյանս, քննարկելով թիվ 10186217 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2017 թվականի օգոստոսի 2-ին ժամը՝ 23:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Դավթաշեն 3-րդ թաղամասի 23-րդ շենքի 21-րդ բնակարանում Սյուզաննա Լեոնիկի Մովսեսյանը և նրա մայրը՝ Սուսաննա Ռուզվելտի Սարգսյանը կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել են Նավաթ Անսարիի հետ, որի ընթացում Ս.Սարգսյանը ձեռքերով հարվածել է Ն.Անսարիի դեմքին, կծել աջ ձեռքի ցուցամատը և դաստակը, իսկ Ս.Մովսեսյանը ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ն.Անսարիի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս պատճառելով առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող դեմքի ձախ կեսի, կրծքավանդակի, աջ և ձախ նախաբազուկների, աջ դաստակի 2-րդ մատի շրջանների քերծվածքների, արյունազեղումների, սալջարդ վերքերի ձևով մարմնական վնասվածքներ:

Փաստի առթիվ 2017 թվականի օգոստոսի 11-ին ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 10186217 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին, որը ստացվել է՝ 16.08.2017թ-ին և ընդունվել է վարույթ:

Սույն քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես տուժող հարցաքննել Նավաթ Ախտառի Անսարիին, սակայն վերջինս չի տիրապետում հայրեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է հնդկերեն գրավոր և բանավոր լեզվին:

Ելնելով ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1.Թիվ **10186217** քրեական գործով որպես թրգման ներգրավել <<Արթ Քոնսալթինգ>> ՍՊ ընկերության լիազորված թարգմանիչ՝ Գայանե Գևորգի Աղամալյանին:

2.Թարգման Գայանե Գևորգի Աղամալյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ Ռ.Կ.Մարտիկյան

Ինձ պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգման՝ Գ. Աղամալյան

<<16>> 10 2017թ.

Ավագ քննիչ՝ Ռ.Կ.Մարտիկյան

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 10860217 քրեական գործով թարգման ներգրավելու մասին

« 19 »դեկտեմբերի 2017թ. ք.Երևան

ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Ա.Ղազարյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 10860217 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ՝

Իսրայելի Հանրապետության քաղաքացի Մոհանադ Աբո Ակելը 2017 թվականի նոյեմբերի 29-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Աբելյան 6 հասցեում գործող «ՀԱՅԲՈՒՍԱԿ» համալսարանում նշված համալսարանից հեռացնելու հարցի շուրջ վիճաբանել է բժշկական ֆակուլտետի դեկան Յանինա Մարինոսյանի և փոխդեկան Նարինե Մարտիրոսյանի հետ, որի ընթացքում Մոհանադ Աբո Ակելը նախ ձեռքերով հարվածել է փոխդեկան Ն.Մարտիրոսյանին, ապա՝ դեկան Յ.Մարինոսյանին վերջիններիս պատճառելով առողջության թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով:

Դեպքի առթիվ 2017 թվականի դեկեմբերի 8-ին ոստիկանության Մաշտոցի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով հարուցվել է թիվ 10860217 քրեական գործը:

2017 թվականի դեկտեմբերի 12-ին թիվ 10860217 քրեական գործն ուղարկվել է Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Մոհանադ Աբո Ակելը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ տիրապետում է արաբերեն լեզվին և անհրաժեշտ է վերջինիս ապահովել արաբերեն լեզվի մասնագետ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ՝

Սույն քրեական գործով որպես թարգման ներգրավել «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մարալ Զաքարյանին /լիազորագիր 502/ և միաժամանակ նրան ծանոթացնել սույն որոշմանը և պարզաբանել իր իրավունքները և պարտականությունները.

ավագ քննիչ՝ Տ.Ա.Ղազարյան

Որոշման մասին ինձ ծանուցվել է, միաժամանակ պարզաբանվել են իմ իրավունքները և պարտականությունները, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգման՝

«19» 12 2017թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Գործին թարգմանիչ մասնակից դարձնելու մասին

24-ը օգոստոսի 2018թ. գ. Մասիս

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ. Ա. Գաբրիելյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 44167618 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018թ. հուլիսի 4-ին Մասիս քաղաքի 7-րդ փող. Նրբ. 10ա տան բնակչուհի Մարինա Վլադիմիրի Սևումյանը հաղորդում է տվել ոստիկանության Մասիսի բաժն, որ նույն օրը ժամը 10:00-ի սահմաններում իրենց տանը կենցաղային հարցի շուրջ վիճաբանել է ամուսնու՝ Արթուր Արամի Սևումյանի հետ, որի ընթացքում վերջինս 5 անգամ հարվածել է իր ձեռքերին և գլխի շրջանին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Նախապատրաստված նյութերի ընթացքում պարզվել է, որ 04.07.2018թ. ժամը՝ 10:00-ի սահմաններում Մ.Սևումյանը կենցաղային հարցի շուրջ վիճաբանել է ամուսնու՝ Արթուր Արամի Սևումյանի հետ, որի ժամանակ վերջինս ձեռքերով հարվածել է Մ.Սևումյանի ձեռքերին, աջ ուսին և գլխի շրջանին՝ պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ: Մ.Սևումյանը պնդել է իր բողոքը:

Դեպքի առթիվ 13.07.2018թ որոշմամբ ոստիկանության Մասիսի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 44167618 քրեական գործը և ուղարկվել է Մասիսի քննչական բաժին նախաքննություն կատարելու համար:

18.07.2018թ. քրեական գործի նախաքննության կատարումը Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի պետի կողմից հանձնարարվել է ինձ:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Մասիս քաղաքի բնակչուհի Դինարա Արատաշի Սևումյանին, սակայն պարզվել է, որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտություն է առաջացել նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար որպես թարգմանիչ մասնակից դարձնել ,,Արթ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ,, ՍՊԸ-ի աշխատակից, ռուսերեն լեզվի թարգմանիչ Նարինե Ալեքսեյի Վարդանյան /անձնագիր AK 0370436, ՀՀ քաղաքացի, հաշվառված է Արարատի մարզ Գ.Նիզամի Իգոր Թևոսյան փողոց 12-րդ տուն /, ով տիրապետում է ռուսերեն ու հայերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով վերոգրյալը և այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ <<Հայաստանի Հանրապետութ-յունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով>>, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

23 հոկտեմբերի, 2018թ. **ք.Երևան**

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Հ.Վ.Մանասյանս, ուսումնասիրելով վարույթում քննվող թիվ 14882618 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնում Ռինչն Կարմա Յալայի Բուտիան հաղորդում է տվել այն մասին, որ 2018 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 24:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Քեռու փողոցի 58-րդ շենքի 44-րդ բնակարանում, իր ծանոթ Ջիտենդր Պազի Սորհին բացահայտ հափշտակել է իր ձեռքում եղած դրամապանակը, որից հանել և հափշտակել է խոշոր չափերի՝ 2.320.000 ՀՀ դրամին համարժեք 4.000 Եվրո գումար և դատարկ դրամապանակը նետել մի կողմ, որից հետո Ջինտենդր Պազի Սորհին և նրա ընկեր Վիսվար Սոմի Միգլանին իրեն թույլ չեն տվել դուրս գալ Երևան քաղաքի Քեռու փողոցի 58-րդ շենքի 44-րդ բնակարանից՝ այդ կերպ իրեն ապօրինի ազատությունից զրկելով:

Դեպքի առթիվ 2018 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ Ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 133-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով հարուցվել է թիվ 14882618 քրեական գործը:

2018 թվականի հոկտեմբերի 22-ին հիշյալ քրեական գործը ստացվել է Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում և նույն օրը քննչական բաժնի պետի կողմից հետագա նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

2018 թվականի հոկտեմբերի 22-ին Ռինչն Կարմա Յալայի Բուտիան ճանաչվել է տուժող:

Նկատի ունենալով, որ Ռինչն Կարմա Յալայի Բուտիան ճանաչվել է տուժող և նրա հետ անհրաժեշտ է կատարել մի շարք քննչական և դատավարական գործողություններ, այն ինչ վերջինս տիրապետում է հինդի բանավոր ու գրավոր լեզվին, իսկ հայերեն լեզվի չի տիրապետում՝ ընդհանրապես: Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, իսկ Ռինչն Կարմա Յալայի Բուտիան չի տիրապետում հայերեն լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Արթ Քոնսալթինգ>> ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Գայանե Գևորգի Աղամալյանին՝ բարձրագույն կրթությամբ, բնակվող ք.Երևան Խաղաղ Դոնի 1-ին շենք, բնակարան 41:

2. Թարգմանիչ Գայանե Գևորգի Աղամալյանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

29 հոկտեմբերի, 2018թ. **ք.Երևան**

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Հ.Վ.Մանասյանս, ուսումնասիրելով վարույթումս քննվող թիվ 14882618 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնում Ռինչն Կարմա Յալայի Բուտիան հաղորդում է տվել այն մասին, որ 2018 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 24:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Քեռու փողոցի 58-րդ շենքի 44-րդ բնակարանում, իր ծանոթ Ջիտենդր Պազի Սորհին բացահայտ հափշտակել է իր ձեռքում եղած դրամապանակը, որից հանել և հափշտակել է խոշոր չափերի՝ 2.320.000 ՀՀ դրամին համարժեք 4.000 Եվրո գումար և դատարկ դրամապանակը նետել մի կողմ, որից հետո Ջինտենդր Պազի Սորհին և նրա ընկեր Վիսվար Սոմի Միգլանին իրեն թույլ չեն տվել դուրս գալ Երևան քաղաքի Քեռու փողոցի 58-րդ շենքի 44-րդ բնակարանից՝ այդ կերպ իրեն ապօրինի ազատությունից զրկելով:

Դեպքի առթիվ 2018 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ Ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 133-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով հարուցվել է թիվ 14882618 քրեական գործը:

2018 թվականի հոկտեմբերի 22-ին հիշյալ քրեական գործը ստացվել է Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում և նույն օրը քննչական բաժնի պետի կողմից հետագա նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

2018 թվականի հոկտեմբերի 22-ին Ռինչն Կարմա Յալայի Բուտիան ճանաչվել է տուժող:

Նկատի ունենալով, որ Ռինչն Կարմա Յալայի Բուտիան ճանաչվել է տուժող և նրա հետ անհրաժեշտ է կատարել մի շարք քննչական և դատավարական գործողություններ, այն ինչ վերջինս տիրապետում է հինդի բանավոր ու գրավոր լեզվին, իսկ հայերեն լեզվի չի տիրապետում՝ ընդհանրապես: Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, իսկ Ռինչն Կարմա Յալայի Բուտիան չի տիրապետում հայերեն լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Արթ Քոնսալթինգ>> ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Հերմինե Ժիրայրի Այվազյանին՝ բարձրագույն կրթությամբ, բնակվող ք.Երևան Նոր-Արեշ 26-րդ փողոց 1-ին նրբանցք 1-ին տուն:

2. Թարգմանիչ Հերմինե Ժիրայրի Այվազյանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ

Որոշում
Թարգմանիչ ճանաչելու մասին

«06» դեկտեմբերի 2017թ. ք.Արտաշատ

Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ն. Ս. Այվազյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 27177817 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2017թ. դեկտեմբերի 4-ին ժամը 03.00-ի սահմաններում Երևան քաղաքի բնակիչներ Հրաչյա Նշանի Գևորգյանը և նրա ընկեր ոմն Մխոն նախնական համաձայնությամբ ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն կատարելու դիտավորությամբ Երևան քաղաքի «Կանաչ» սուպերմարկետի մոտից Արտաշատ քաղաք տանելու պատրվակով իրենց հետ են վերցրել Գորիս քաղաքի բնակիչ Կորյուն Շալունցին և Երասխ-Երևան ավտոճանապարհի Արտաշատ քաղաքի վարչական տարածքում հրաչյա Գևորգյանը կանգնեցրել է իր վարած «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենան, որտեղ վերջիններս բացահայտ հափշտակել են Կորյուն Շալունցին պատկանող ընդհանուր 500.000 << դրամ արժողության գույքը, որը զուգորդվել է նրա առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով՝ այն, է՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել Կորյուն Շալունցին և բացահայտ հափշտակել են վերջինիս գույքը, որից հետո ավտոմեքենայով դիմել են փախուստի:

Դեպքի առթիվ 04.12.2017թ. ոստիկանության Արտաշատի բաժնում << քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով հարուցվել է թիվ 27177817 քրեական գործը:

04.12.2017թ. քրեական գործն ուղարկվել է Արարատի մարզային քննչական վարչություն նախաքննություն կատարելու համար:

04.12.2017թ. քրեական գործի նախաքննության կատարումը Արարատի մարզային քննչական վարչության պետի տեղակալի կողմից հանձնարարվել է ինձ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով տուժող Կորյուն Շալունցը չի տիրապետում դատավարության լեզվին՝ հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին, անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել նրանց, ուստի ղեկավարվելով << քր. դատ. օր. 15-րդ, 83-րդ և 55-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 27177817 քրեական գործով ռուսերենից հայերեն թարգմանություն իրականացնելու համար որպես թարգմանիչ ճանաչել թարգմանիչ Նարինե Ալբերտի Վարդանյանին /ծնվ. 27.03.1993թ., հաշվառված Արարատի մարզ գյուղ Նիզամի Թևոսյան փողոց տուն 12, անձնագիր AK0370436, տրված 02.09.2009թ., 044-ի կողմից, աշխատում է «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ում/, նրան բացատրել << քր. դատ. օր. 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել սխալ թարգմանություն կատարելու համար << քր. օր. 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2.Որոշման մասին հայտնել Ն. Վարդանյանին:

Ավագ քննիչ՝ Ն.Այվազյան

Թարգմանչի իրավունքները և պարտականությունները ինձ բացատրվել են

Թարգմանիչ՝ Ն. Վարդանյան

„06" 12 2017թ.

որոշման պատճեն ստացա